ԿԱՅԱՑԱՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ.ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵՑ ՏԱԹԵՎԻԿ ՇԱԼՋՅԱՆԸ

23.01.2023 20:52

2023 թվականի հունվարի 23-ին տեղի ունեցավ ՀՀ փաստաբանների պալատի Կարգապահական հանձնաժողովի անդրանիկ նիստը:

Նիստի մեկնարկից առաջ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հանդես եկավ ողջույնի խոսքով: Պալատի նախագահը գործընկերներին մաղթեց արդյունավետ աշխատանք՝ ի նպաստ փաստաբանական ինստիտուտի:

Նիստին ներկա էին հանձնաժողովի բոլոր անդամները:

Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝ հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ընտրության:

Հանձնաժողովի առաջին նիստը վարեց հանձնաժողովի տարիքով ավագ անդամ Հունան Բաբայանը:

Հավաքված ձայների մեծամասնությամբ հանձնաժողովի նախագահ ընտրվեց Տաթևիկ Շալջյանը:

Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից՝ որպես հանձնաժողովի քարտուղար առաջարկվեց Պալատի աշխատակից Նոննա Համբարձումյանի թեկնածությունը, որը միաձայն ընդունվեց հանձնաժողովի անդամների կողմից և Նոննա Համբարձումյանը նշանակվեց հանձնաժողովի քարտուղար:

Ծանուցում

Հիշեցնենք, որ Կարգապահական հանձնաժողովը Փաստաբանների պալատում նոր ձևավորված մարմին է, որը լսելու է փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ բողոքները և քննարկելու է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

*Կարգապահական հանձնաժողովի գործառույթներն առավել մանրամասն ներկայացված է **այստեղ**:*

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })